

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2016թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Ն. Միմոնյան
«26» մայիսի 2016թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կայուն զարգացման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Կենտրոնը հիմնադրվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ԵՊՀ-ի միջև 2012թ. փետրվարի 28-ին կնքված Փոխըմբռման հուշագրի հիման վրա:

3. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի կանոնադրության, ֆակուլտետի կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

4. Կենտրոնը գիտահետազոտական և փորձագիտական ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է աջակցել պետության կայուն զարգացմանը, բնական ռեսուրսների ռացիոնալ և նպատակային օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, ոլորտի բարելավման քաղաքականության ծրագրերի մշակմանն ու դրանց իրագործմանը:

5. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կենտրոնի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ Կայուն զարգացման կենտրոն
ռուսերեն՝ Центр устойчивого развития
անգլերեն՝ Centre on Sustainable Development

7. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Կենտրոնի գործառույթներն են.

8.1. Ուսումնասիրել և վերհանել բնական՝ հանքահումքային և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ոլորտին առնչվող տնտեսագիտական, էկոլոգիական ու սոցիալական խնդիրները և մշակել դրանց լուծման ուղիները՝ տալ առաջարկություններ կառավարման բարելավման ուղղությամբ:

8.2. Աջակցել ՀՀ կառավարությանն ազգային և տեղական մակարդակներում ՄԱԿ-ի Կայուն Զարգացման փաթեթի իրագործման ուղղությամբ՝ ապահովելով հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացներում:

8.3. Իրականացնել երկրաբանական, երկրաբանատնտեսագիտական, ընդերքաբանական, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձագիտական (փորձաքննական) աշխատանքներ:

8.4. Որպես գիտատնտեսական, հետազոտական, փորձագիտական բարձր ռեսուրսային կենտրոն, իրականացնել կայուն զարգացման սկզբունքներին համահունչ ծրագրեր և նպաստել ԵՊՀ կարողությունների հզորացմանը:

8.5. Առկա կարծիքների փոխըմբռման և որոշումների լավագույն տարբերակի ընտրության նպատակով շահագրգիռ կողմերի՝ կառավարության, տնտեսվարողների ու հանրության մասնակցությամբ կազմակերպել կլոր սեղաններ, քննարկումներ, աշխատաժողովներ, խորհրդատվություններ և այլ միջոցառումներ:

8.6. Հրատարակել Կենտրոնում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները, մշակված ծրագրերը, գիտահետազոտական հոդվածները և ուսումնասօժանդակ նյութերը:

9. Կենտրոնի առջև դրված խնդիրների ու նպատակների արդյունավետ իրականացման նպատակով Կենտրոնը սահմանված կարգով կարող է համագործակցել ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս գործող կազմակերպությունների՝ պետական մարմինների, գիտահետազոտական կազմակերպությունների ու կենտրոնների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Կենտրոնի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և Կենտրոնի կանոնադրությանը համապատասխան:

11. Կենտրոնի կառավարումն իրականացնում է Կենտրոնի տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

12. Կենտրոնի տնօրենը՝

12.1. Կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործունեությունը գիտահետազոտական, փորձագիտական, միջազգային և այլ ոլորտներում, ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ Կենտրոնի համագործակցությունը:

12.2. Սահմանված կարգով տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական միջոցները:

12.3. Ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդին:

12.4. Ներկայացնում է կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, Կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

12.5. Պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

12.6. Լուծում է Կենտրոնի կանոնադրությունից բխող և Կենտրոնի գիտահետազոտական, փորձագիտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Կենտրոնի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են.

13.1. Կենտրոնին ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը և դրամական միջոցները:

13.2. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները:

13.3. ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները:

13.4. Կենտրոնի գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական արտադրանքի վաճառքից գոյացող միջոցները:

13.5. Այն միջոցները, որոնք գոյանում են Կենտրոնին թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: